

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան

6 ապրիլի 2021թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|---------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան | 8. Լիաննա Գալստյան |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 9. Կատարինե Զևորգյան |
| 3. Աննա Կարախանյան | 10. Միրանուշ Վարդանյան |
| 4. Առնակ Մելիքյան | 11. Վահան Հովսեփյան |
| 5. Արման Ներսիսյան | 12. Վեսմիրա Հարությունյան |
| 6. Գրիգորի Սադյան | 13. Քրիստինա Հակոբյան |
| 7. Իգոր Սկրտումյան | 14. Քրիստինե Գյոնջյան |

Նիստը նախագահում էր Իգոր Սկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Քրիստինա Հակոբյանը:

Օրակարգ՝

1. «Ատելության խոսքի կարգավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում» հետազոտության մեջ դոմենային ոլորտին առնչվող առաջարկությունների վերաբերյալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի դիրքորոշման մասին:

1. «Ատելության խոսքի կարգավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում» հետազոտության մեջ դոմենային ոլորտին առնչվող առաջարկությունների վերաբերյալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի դիրքորոշման մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ նիստի նախագահողը՝ նշելով, որ ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովից ստացվել է «Ատելության խոսքի կարգավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում» հետազոտությունը, որի մեջ անդրադարձ է կատարվում նաև «.am» և «.hay» դոմենային անունների տիրույթներում ատելության խոսքի հետ կապված հարցերին, ներկայացվում են դոմենային ոլորտին, «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ին առնչվող մի շարք առաջարկություններ: Ելույթ ունեցողն առաջարկեց քննարկել ստացված առաջարկությունները և արտահայտել խորհրդի դիրքորոշումը:

Ծավալված քննարկման ընթացքում հնչեցին տարբեր տեսակետներ, այդ թվում՝ որպես ատելության խոսքը կարգավորող մարմին առաջարկել «Հայաստանի Հանրապետության


ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբին: Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը՝

- ձայների 10 կողմ, 2 դեմ, 2 ձեռնպահ հարաբերակցությամբ չընդունեց «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի կողմից ատելության խոսքի կանխարգելման վերաբերյալ բողոքների ընդունման և դրա վերաբերյալ որոշումների կայացման գործնական և կանխատեսելի մեխանիզմների (այդ թվում՝ իրավական ակտերի) սահմանման վերաբերյալ առաջարկությունը,
- ձայների 13 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ չընդունեց «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վերաբերյալ դրույթներ ամրագրելու, վերջինիս նկատմամբ վերահսկողական գործառույթներ սահմանելու կամ այդ գործառույթներն էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի քաղաքականություն մշակող նախարարության և կազմակերպության միջև կնքվող պայմանագրում նախատեսելու վերաբերյալ առաջարկությունը,
- ձայների 9 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ (խորհրդի 3 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ չընդունեց ռեգիստրար-գրանցող պայմանագրերում գրանցված դոմենային անունը ատելության խոսքի տարածման կամ հրահրման նպատակով օգտագործելու վերաբերյալ արգելող, դրա հետևանքով դոմենային անվան գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքերի, կարգի մասին դրույթներ սահմանելու վերաբերյալ առաջարկությունը: Մինևույն ժամանակ առաջարկվեց «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների գրանցման քաղաքականության մեջ ամրագրել դրույթ, ըստ որի դոմենային անունը չի կարող օգտագործվել ատելության խոսքի տարածման կամ հրահրման նպատակով,
- ձայների 9 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ (խորհրդի 3 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ չընդունեց ակնհայտորեն ատելության խոսք պարունակող որոշակի դոմենային անունների գրանցումը չթույլատրելու կանոնների վերաբերյալ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի կողմից մեխանիզմներ ներդնելու մասին առաջարկությունը,
- ձայների 9 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 4 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ չընդունեց «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների գրանցման քաղաքականության մեջ լրացում կատարելու վերաբերյալ առաջարկությունը, ըստ որի դոմենային անվան գրանցումը կարող է մերժվել այն դեպքերում, երբ դոմենային անունն ակնհայտորեն կարող է օգտագործվել ատելության խոսքի հարուցման, հրահրման, տարածման, խրախուսման, քարոզման նպատակներով,
- ձայների 8 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ (խորհրդի 5 անդամ չի մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ չընդունեց «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում ատելության խոսքի հետ կապված «ծանուցել և հեռացնել» (Notice and Take Down) ընթացակարգի մեխանիզմների սահմանման վերաբերյալ առաջարկությունը:

- 1) «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության կողմից աստելության խոսքի կանխարգելման վերաբերյալ բողոքների ընդունման և դրա վերաբերյալ որոշումների կայացման գործնական և կանխատեսելի մեխանիզմների (այդ թվում՝ իրավական ակտերի) սահմանման վերաբերյալ առաջարկությունը,
- 2) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վերաբերյալ դրույթներ ամրագրելու, վերջինիս նկատմամբ վերահսկողական գործառույթներ սահմանելու կամ այդ գործառույթներն էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի քաղաքականություն մշակող նախարարության և կազմակերպության միջև կնքվող պայմանագրում նախատեսելու վերաբերյալ առաջարկությունը,
- 3) ռեզիստրար-գրանցորդ պայմանագրերում գրանցված դոմենային անունը աստելության խոսքի տարածման կամ հրահրման նպատակով օգտագործելու վերաբերյալ արգելող, դրա հետևանքով դոմենային անվան գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքերի, կարգի մասին դրույթներ սահմանելու վերաբերյալ առաջարկությունը,
- 4) ակնհայտորեն աստելության խոսք պարունակող որոշակի դոմենային անունների գրանցումը չթույլատրելու կանոնների վերաբերյալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության կողմից մեխանիզմներ ներդնելու մասին առաջարկությունը,
- 5) «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների գրանցման քաղաքականության մեջ լրացում կատարելու վերաբերյալ առաջարկությունը, ըստ որի դոմենային անվան գրանցումը կարող է մերժվել այն դեպքերում, երբ դոմենային անունն ակնհայտորեն կարող է օգտագործվել աստելության խոսքի հարուցման, հրահրման, տարածման, խրախուսման, քարոզման նպատակներով,
- 6) «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում աստելության խոսքի հետ կապված «ծանուցել և հեռացնել» (Notice and Take Down) ընթացակարգի մեխանիզմների սահմանման վերաբերյալ առաջարկությունը:

Նիստի նախագահող՝

Նիստի քարտուղար՝



Իգոր Մկրտումյան

Քրիստինա Հակոբյան